**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1**
**№ ԳՀԱՊՁԲ-20-10/5-3 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

**ք. Երևան** **13.03.2020թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ն. Յոլյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կ. Հարությունյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **17.12.2019թ.** կնքված № **ԳՀԱՊՁԲ-20-10/5-3** գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին(այսուհետև՝ Ստացող) մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

**2. Գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **979,260 (ինը հարյուր յոթանասունինը հազար երկու հարյուր վաթսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն**, որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի **3.3** կետով նախատեսված կարգով, 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան **10.12.2020թ.**:

**3. Այլ պայմաններ**

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 3 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ՊՆ ԿԾ և ԱԲ վարչությունը:**

**4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Էյչ Գրուպ» ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5 | ՀՀ, ք. Երևան, Բաշինջաղյան 1փ., 13/30 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Արմսվիսբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ 2500010488760100 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 01254973 |
| ՀՀ ՊՆ ՆՏԱ Դեպարտամենտի պետ | տնօրեն |
| Ն. ՅՈԼՅԱՆ | Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ |

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-10/5-3 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Ապրանքի անվանում | Չ/Մ | Քանակ | Միավորի գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր գումար /ՀՀ դրամ/ | Մատակարարումը՝ 2020թ |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 2-րդ եռամսյակ |
| 4. | Ավտոմատ անջատիչներ (Էլեկտրական միաֆազ ավտոմատ անջատիչ 25Ա) | հատ | 300 | 520.2 | 156,060 | 300 |
| 5. | Ավտոմատ անջատիչներ (Էլեկտրական միաֆազ ավտոմատ անջատիչ 32Ա) | հատ | 350 | 552 | 193,200 | 350 |
| 6. | Ավտոմատ անջատիչներ (Էլեկտրական միաֆազ ավտոմատ անջատիչ 40Ա) | հատ | 400 | 540 | 216,000 | 400 |
| 8. | Ավտոմատ անջատիչներ (Էլեկտրական միաֆազ ավտոմատ անջատիչ 63Ա) | հատ | 600 | 690 | 414,000 | 600 |

**Գնորդ**
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ Դեպարտամենտի պետ
Ն. ՅՈՒԼՉՅԱՆ

**Վաճառող**
«Էյչ Գրուպ» ՍՊԸ
տնօրեն
Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-10/5-3 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Հ/h | Ապրանքի անվանում | CPV կոդ | Ընդհանուր գին/դրամ/ | Վճարումը նախատեսվում է իրականացնել 2020թ., համապատասխան ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ. |
| 4. | Ավտոմատ անջատիչներ (Էլեկտրական միաֆազ ավտոմատ անջատիչ 25Ա) | 31211180/525 | 156,060 | 156,060 | 156,060 | 156,060 | 156,060 | 156,060 | 156,060 | 156,060 | 156,060 | 156,060 |
| 5. | Ավտոմատ անջատիչներ (Էլեկտրական միաֆազ ավտոմատ անջատիչ 32Ա) | 31211180/526 | 193,200 | 193,200 | 193,200 | 193,200 | 193,200 | 193,200 | 193,200 | 193,200 | 193,200 | 193,200 |
| 6. | Ավտոմատ անջատիչներ (Էլեկտրական միաֆազ ավտոմատ անջատիչ 40Ա) | 31211180/527 | 216,000 | 216,000 | 216,000 | 216,000 | 216,000 | 216,000 | 216,000 | 216,000 | 216,000 | 216,000 |
| 8. | Ավտոմատ անջատիչներ (Էլեկտրական միաֆազ ավտոմատ անջատիչ 63Ա) | 31211180/529 | 414,000 | 414,000 | 414,000 | 414,000 | 414,000 | 414,000 | 414,000 | 414,000 | 414,000 | 414,000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**Գնորդ**
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ Դեպարտամենտի պետ
Ն. ՅՈՒԶԲԱՇՅԱՆ

**Վաճառող**
«Էյչ Գրուպ» ՍՊԸ
տնօրեն
Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ